

Հաստատում եմ՝
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման
ակադեմիայի ռեկտոր



ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2023թ. դեկտեմբերի 4-ի նիստում: Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, քաղ. գիտ. թեկնածու, ԱՄՆ Պրիստոնի համալսարանի շրջանավարտ Ռ. Էլամիրյանը, քաղ. գիտ. թեկնածու Մ. Արսենյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Բեդրոս Չավիկոյիլին, քաղ. գիտ. թեկնածու Մ. Մարգարյանը, հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի գործավար Ս. Յ. Ավագյանը: Մասնակցում էին նաև ասպիրանտներ Ա. Հարությունյանը, Ֆ. Նիկողոսյանը, Ն. Հովհաննիսյանը, Ա. Աբրահամյանը:

Էկոլոգիական անվտանգության արդի հիմնախնդիրն էապես ազդում է ոչ միայն անհատների, այլև ամբողջ հասարակության գիտակցության, պետությունների վարած քաղաքականության, պետական կառավարման համակարգերի վրա: Ու թեպետ աշխարհում զարգացած պետությունների կողմից շարունակական միջոցներ են ձեռնարկվում շրջակա միջավայրի վրա իրենց տնտեսության և արդյունաբերության բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, սակայն դրանք, ըստ էության, զլոբալ իմաստով էական արդյունք չեն

տալիս: Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ մարդկությունն արդեն դուրս է եկել բնական ռեսուրսները հնարավորինս ինամքով ու խելամտորեն ծախսելու բոլոր սահմաններից և մարդկային գործունեության հետևանքով մոլորակի վիճակի արագընթաց վատթարացումը դարձել է գլոբալ անվտանգության ապահովման բաղադրիչ: Այդ է պատճառը, որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու և այն հնարավորինս ընդունելի մակարդակ վերադարձնելու համար անհրաժեշտություն է առաջացել ոչ միայն փոխել անձնական և հասարակական ընկալումներն ու գիտակցությունը, այլև վերախմաստավորել առկա մոտեցումները: Անհրաժեշտություն է առաջացել նաև հումանիզացնել գլոբալ և լոկալ անվտանգության էկոլոգիական հիմնախնդրին առնչվող և՛ զարգացած, և՛ զարգացող պետությունների ներքին ու արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև միջպետական պարտավորությունները:

Այս համատեքստում, արդի աշխարհում մեծ զգայունություն և թափանցիկություն ունեցող էկոլոգիական հիմնախնդիրն այսօր ինչ խոսք միջգիտակարգային է, և քաղաքական գիտության կողմից նրա համակարգային ուսումնասիրումը հրամայական է, քանի որ այն քաղաքական գործիչների, նախընտրական և հետընտրական գործընթացներում՝ քաղաքական կուսակցությունների, պետական քաղաքական համակարգերի պրակտիկ գործունեության բաղադրիչ է:

Ներկայումս շրջակա միջավայրի որակի վատթարացումը դարձել է իրական և անթաքցնելի փաստ: Որպես այդպիսին այն արմատական խզում է առաջացրել զարգացած և զարգացող երկրների քաղաքական արդիականացման գործընթացներում: Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նկատմամբ նմանօրինակ մոտեցումները արդեն 21-րդ դարի սկզբից հանգեցրել են բնական և մարդաբանական աղետների, օտարման և միգրացիոն տեղաշարժերի կամ արտագաղթի, ինչպես նաև կենսաբազմազանության և կենսաքաղաքականության խաթարման: Ավելին, մարդկությունն այսօր առնչվել է նոր հիվանդությունների, դիցուք՝ «COVID-19»-ի, քաղցկեղի նոր դրսևորումների (հատկապես՝ մաշկային), մանկածնության և հղիության խանգարումների: Այս ամենը ստիպում է վերաբժնորել և՛ զարգացած, և՛ զարգացող պետությունների ու քաղաքացիական հասարակությունների միջև դիսկուրսը, քանի որ իրենց քաղաքականության բովանդակությունն ու ռազմավարությունն ենթադրում է սոցիալական պատասխանատվություն՝ հնարավորինս կայուն և անվտանգ զարգացում ու կենսաքաղաքականության շարունակականությունն ապահովելու համար: Փաստորեն, «Կապույտ մոլորակը» վտանգված է և այն ունի գլոբալ մասշտաբ, որն էլ բոլոր պետություններին ստիպում է, իրենց իսկ անվտանգությունից ելնելով, զուգամիտել տարածաշրջանային (լոկալ), լոկալ և գլոբալ անվտանգային խնդիրները՝ հումանիզացնելու համար Երկիր մոլորակի կառավարումը: Օրակարգում առաջնահերթ են դարձել հարցերը, թե ինչպե՞ս պետք է հարաբերվեն

հասարակության կայուն և անվտանգ զարգացման տնտեսական և էկոլոգիական ասպեկտները, պետությունների տնտեսական և բնապահպանական շահերը, միջպետական հարաբերությունները և այլն:

Արդի աշխարհի իրողություններն ու մարտահրավերները հետազոտական նոր հորիզոններ են բացում շատ գիտությունների համար և, այս համատեքստում, քաղաքական գիտության (Political Science) առջև ևս ծառայել են նոր մարտահրավերներ, այն է՝ նորովի ուսումնասիրել քաղաքական զարգացման գործընթացները զարգացած և զարգացող երկրներում: Այս իմաստով՝ քաղաքական էկոլոգիան որպես քաղաքական գիտության նոր դիսցիպլին, հետազոտական արդի ու հեռանկարային ուղղություն է: Այն ուսումնասիրում է քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների ու էկոլոգիական խնդիրների և փոփոխությունների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Ենթադրվում է, որ քաղաքական կառավարման գործընթացների նման ընկալումը պայմանավորում է զարգացում: Այսպիսով, քաղաքական գիտության զարգացման ներկա փուլը բնութագրվում է, ընդհանուր առմամբ, միջառարկայական, միջգիտաճյուղային կապերի խորացմամբ, ինչպես նաև ակադեմիական և կիրառական գիտելիքների յուրօրինակ սինթեզով՝ իր տեսական և մեթոդական հենքով:

Անբեկանելի է այն, որ քաղաքական գիտության մեջ ի հայտ է եկել նոր գիտաճյուղ՝ քաղաքական էկոլոգիան (էկոպոլիտիկան) կամ էկոլոգիական քաղաքագիտությունը (էկոպոլիտոլոգիան): Այն առանձնանում է էկոլոգիական խնդիրների ու երևույթների քաղաքականացմամբ, ինչն էլ հանգեցրել է էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի վերաբժնորմանը:

Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս փաստելու, որ Առլեն Մայիսի Շահվերդյանի «էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը իր տեսակի մեջ եզակի է, կարելի է նույնիսկ ասել՝ բացառիկ, քանի որ հեղինակը համակարգված կերպով ուսումնասիրել է հիմնախնդրի վերաբերյալ առկա ակադեմիական և փորձագիտական մոտեցումները:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական և քաղաքագիտական խորքային ուսումնասիրության հիմնավորմամբ, որը թույլ կտա ՀՀ-ին մշակել ազգային անվտանգության ապահովման ռազմավարական առումով նոր հրամայականներ, դիմագրավել էկոլոգիական բնույթի նոր մարտահրավերներին, ձևավորել տարածաշրջանային երկրների հետ հարաբերությունների նպատակային քաղաքականություն: Ատենախոսությունը հնարավորություն է տալիս վերախմբավորելու քաղաքական գործընթացների և ինստիտուտների վրա էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ազդեցությունը, իսկ ՀՀ արտաքին քաղաքական գործունեության առումով՝ նպաստավոր դիրք զբաղեցնելու:

Հայաստան-Ադրբեջան առկա և հետագա հարաբերություններում էկոլոգիական խնդիրների արծարծման ժամանակ:

Ատենախոսության նպատակն է՝ վեր հանել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունն ու ընդգծել կարևորությունը քաղաքագիտական և ռազմավարական առումներով, ներպետական ու միջպետական քաղաքական-անվտանգային գործընթացներում և ժամանակակից պատերազմներում, միևնույն ժամանակ՝ դիտարկելով բնահամակարգի միտումնավոր ոչնչացման դատապարտման միջազգային գործընթացների արդյունքները՝ որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հակառակորդի նկատմամբ գերակայություն ապահովող բանակցային գործիք և ՀՀ անվտանգային շահերի ապահովման նոր ու արդյունավետ ռազմավարական ուղղություն:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է բացահայտել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի առանձնահատկություններն ու դրա ազդեցությունը գլոբալ անվտանգության քաղաքականության ապահովման վրա: Հատկապես գնահատելի է այն, որ հեղինակին հաջողվել է արժևորվել և վերաիմաստավորել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի քաղաքական-անվտանգային, քաղաքագիտական գնահատման կարևորությունը ռազմավարական մակարդակում, ներպետական և միջպետական քաղաքական գործընթացների տիրույթներում, Ղարաբաղյան հակամարտության և Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստներում:

Հեղինակը դիտարկել է մարդու կողմից բնահամակարգերի միտումնավոր վնասումը՝ էկոցիդը, որպես էկոլոգիական անվտանգության կարևոր սպառնալիք՝ գնահատելով այն ժամանակակից պատերազմների բնութագրիչ գծերի և միջազգայնորեն դատապարտելի հանցագործությունների տիրույթներում:

Վերոհիշյալ մոտեցումների համատեքստում սույն թեկնածուական ատենախոսությունը խիստ արդիական և ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որում հեղինակը, գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրելով էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը, միևնույն ժամանակ գնահատել և վերլուծել է այն ռազմավարական, ռազմական-ռազմավարական և քաղաքագիտական հայեցակարգային չափումներում՝ առանցքում դիտարկելով էկոլոգիական հակամարտությունների հետևանքները ժամանակակից պատերազմների համատեքստում:

Գնահատելի է այն, որ հեղինակը նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունն ու կարևորությունը՝ կիրառելով գիտական վերլուծության համալիր և համակարգային ուսումնասիրության մեթոդները իրականացրել է համեմատական վերլուծություն: Դա հնարավորություն է տվել հեղինակին քննադատական մոտեցմամբ և իրադարձությունների խորքային վերլուծությամբ բացահայտել արծարծվող թեմայի արժեքային բազմաշերտությունը: Այդ առումով աշխատանքում գերակա դեր է տրվել համակարգային մեթոդին, որի օգնությամբ

դիտարկվել է էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը որպես զլոբալ անվտանգության կարևոր բաղադրիչ: Միաժամանակ, համեմատական մեթոդը թույլ է տվել վեր հանել զարգացած և զարգացող երկրներում էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նկատմամբ մոտեցումների ու իրականացվող քաղաքականության տարբերությունը:

Ատենախոսության արժանիքներից է նաև այն, որ տարբեր մեթոդների գուգամիտմամբ ներկայացված է նաև էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի բազմաչափությունը: Այդ մոտեցման օգնությամբ էլ զլոբալ և գլոկալ մակարդակներում կարևորված են ազգային և միջազգային չափումներում առկա արժեքանական խզումները էկոլոգիական անվտանգության ապահովման նկատառումներով: Նշված մեթոդների համակարգված կիրառումը հնարավորություն է տվել հեղինակին բազմակողմանիորեն վերլուծել և բացահայտել էկոլոգիական անվտանգության նշանակությունը զարգացող երկրների քաղաքական գործընթացների ժողովրդավարացման համատեքստում:

Վերոշարադրյալը հիմք ընդունելով փաստում ենք, որ ատենախոսության առանցքային դրույթները կարող են կիրառվել թեմայի հետագա գիտական մշակվածության և գիտակրթական հետազոտությունների ուսումնասիրման ժամանակ:

Աշխատանքի գործնական արժեքը էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական գնահատումն է արդի միջազգային և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում: Միաժամանակ, բնառչնչացման քրեականացմանն ուղղված մոտեցումներն ու մեխանիզմներն արդիականացնելու ջանքերն են և ՀՀ-ի կողմից դրանք նպատակային կերպով կիրառելու հեռանկարների ստեղծումը:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես ՀՀ-ի, այնպես էլ այլ պետությունների արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման և կատարելագործման ընթացքում, ինչպես նաև բարձրացնել էկոլոգիական, շրջակա միջավայրը ներկայացնող գերատեսչական կառույցների գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսությունը համակարգված և ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է ինքնուրույն և բարձր մակարդակով: Աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների համապարփակ լուծում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են զլոբալ և գլոկալ մակարդակներում էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ուսումնասիրող հեղինակների բազմաթիվ մենագրություններ և գիտական հոդվածներ, նոր սերնդի պատերազմավարության համատեքստում էկոլոգիական հակամարտությունների վերլուծությանը միտված գիտավերլուծական

նյութեր, ռազմավարություններ և հայեցակարգեր, պետական պաշտոնական կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր, օրենքներ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից (յոթ ենթագլուխներից), եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար ՀՀ-ում անվտանգային ռազմավարության քաղաքական գիտության տիրույթում զարգացնելու համար: Ուսումնասիրության արդյունքում հայեցակարգային բնույթի եզրահանգումներից և հետևություններից բացի, մշակվել են մի շարք պրակտիկ առաջարկություններ՝ էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի գնահատման ուղղությամբ, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ՀՀ-ում: Ուսումնասիրության արդյունքում ստացած եզրահանգումները, հետևություններն ու ընդհանրացումներն ունեն և՛ տեսական, և՛ կիրառական արժեք:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Ատենախոսության հիմքում դրված գիտական կանխավարկածը նորույթ է հայ իրականության համար այն առումով, որ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը հիմնավորվել է որպես ռազմավարական և քաղաքական գիտության շրջանակներում գործառնվող արդի հայեցակարգերի կիրառմամբ իմաստավորվել է ՀՀ անվտանգային արժեշահային համակարգի ռազմավարությունը:

Ըստ այդմ, վստահորեն կարելի է փաստել, որ ատենախոսությունը հայրենական քաղաքական գիտության զարգացման տիրույթներում եզակի աշխատանք է:

Վերոշարադրյալը հիմք ընդունելով կարող ենք եզրակացնել, որ Առլեն Մայիսի Շահվերդյանի՝ հրապարակային պաշտպանության դրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում երկխոսել ատենախոսության հեղինակի հետ: Կարծում ենք, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող դիտողությունները:

1. Ատենախոսության առաջին ենթագլխում՝ «էկոլոգիական անվտանգության արդի զարգացումները» վերստառությամբ, հեղինակը համակարգված կերպով դիտարկել է էկոլոգիայի և էկոլոգիական անվտանգության՝ որպես հասկացությունների, արդի զարգացումներն ու ընդլայնումները, մարդու կենսագործունեության տարբեր շերտերում և մակարդակներում դրանց իմաստավորումը: Աշխատանքը կշահեր, եթե նշված ենթագլխում հեղինակը ներկայացներ նաև քաղաքական էկոլոգիայի արժեքային բազմաչափությունը՝ նրա

մեջ ներառելով բնության, մարդկային համակեցության և իշխանության իրականացման մշակույթի հիմնախնդիրները: Այդ առումով հեղինակին խորհուրդ կտայինք ուսումնասիրել Լարի Պայի «Մարդու Էկոլոգիա» աշխատությունը: Դա հնարավորություն կտար հետազայում ընդարձակել հեղինակի ակադեմիական հետաքրքրությունների եզրը՝ ուսումնասիրելով հիմնախնդիրները եռաչափ ժամանակի մեջ՝ անցյալ, ներկա և ապագա:

2. Ատենախոսությունը կշահեր, եթե զարգացած և զարգացող երկրների միջև առաջացած էկոլոգիական անջրպետը հաղթահարելու ուղիների դիտարկման ժամանակ հեղինակը անդրադառնար հումանիզմին և օգտագործեր փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Ս. Մարգարյանի «21-րդ հարյուրամյակի հումանիզմը. մարդկության ինքնապահպան գաղափարախոսությունը» մենագրությունը (Ե., 2008 թ.): Դա թույլ կտար հեղինակին հիմնավորելու էկոլոգիական աղետները՝ որպես Երկիր մոլորակի դեմ ուղղված և՛ վտանգ, և՛ սպառնալիք:

3. Աշխատանքը առավել համակարգված բնույթ կունենար, եթե հեղինակը տարբերակված դիտարկեր 20-րդ դարի 50-ական թվականներին գաղութային լծի փլուզումից հետո աֆրիկական և լատինաամերիկյան երկրներում մետրոպոլիայի կողմից վարվող նեոմայրուսականության և 20-րդ դարի 90-ական թվականներին հետխորհրդային նորանկախացած երկրներում առկա նեոմայրուսականության տարբերությունները:

4. Աշխատության մեջ առկա են որոշակի տեխնիկական թերություններ:

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ռազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2023 թ. դեկտեմբերի 4-ի նիստում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____ Լ. Պետրոսյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ ~~Ս. Պողոսյան~~



« 4 » 12 2023 թ.